Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՅԱԿՈԲ
ԱՂԱԲԱԲԵԱՆ

ՀԱԼՕԻ ԷՃԸ

Պատմուածք

Մանուկների համար

(Երկու պատկերով)

995
1-43

951

30 MAY 2011

891.99ս
Ա-43 ա

ՅԱԿ. ԱՂԱԲԱԲԵԱՆ

ՉԱԼՕԻ ԷՃԸ

Պատմածք

Մանուկների համար

(երեք պատկերով)

Արտատպած «Հասկեր» ամսաթերթից

6398

-5 FEB 2013

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեֆտրաշարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ. Մաղաբեան փող. № 5

1906 (179)

3060

40

I

Տասպանց Զալօն մի էշ ունէր միայն, մի հատիկ բած էշ։ Այն ամենն, ինչ որ ուրիշները զանազան չորքոտանիներով էին աշխատում իրանց տուն ու տեղի համար, նա՝ ուզէր-չուզէր իրան էշովն էր գործի գնում։ Այնքան դէս. ու դէն էին քշել, որ ուժից գցել էին խեղճ անասունին։ Զալօի կին Եղսում հարսը օրական երկու ճամփայ աղբիւրից ջուր էր կրում այդ էշով, իսկ ինքը ջրաղացն աղուն էր տանում, տնտառը փայտի գնում. սար ու դաշտի երկար ու ձիգ ճանապարհը խօ ոտից գցել էին թէ էշին և թէ իրան։

«Աղբատի լեզուն կարճ է լինում»։ Ունևոր հարևաններն անդամ ձեռաց գործի համար Զօլի էշին էին վազում, առարկելով թէ իրենց էշն ու ձին տներում չեն։ Մի խօսքով, ամբողջ թաղն ու թառակը օգտւում էին աղքատ Զօլի

սուս ու փուս ընաւորութիւնից և էշին ուր կամենային՝ տանում էին։ Նաս բանեցնելուց և հեռու մոտիկ ճանապարհ տանելուց՝ էշը ժամերով յոգնած գետնին պառկում էր, իսկ էշի մի տարեկան բուռակը չէր դիմառել, մի օր էլ վեր էր ընկել ու սատկել։

Այդ բոլոր չարչարանքը կարծես բաւական չէր. Զալի էշը ուրիշ թշնամիներ էլ ունէր։ Ամբողջ գիւղի չարաճճի մանուկները՝ հէնց որ էշին գտնում էին պարապ, մի հնարքով դռնից հեռացնում էին և՝ ջուխտ ու կենտ վրան թափելով, այնքան վազում ու վազեցնում էին անբան անասունին, որ բավ ու բրտինքի մէջ լողացնում էին նրան։

Մանուկների այդ անպիտին վարմունքը ցաւ ու կրակ է դարձել Զալի համար։ Մեծերին, որպէս թէ «խաթրիչուն» բան չէր ասում, իսկ փոքրերին թէկուզ մտածում էր պատահած ժամանակը մի լաւ թակել, բայց այնպէս փախչում ու թաղնւում էին անպիտանները, որ նրա առաջը մնում էր միայն էշը իշացած կանգնած։ Այսպիսի դէպքում, Զալն իր սրտի զայրոյթը էշից էր հանում. այնքան «վեր էր հատում», որ էշի ետին ոտքերն ուղիղ գնալու փոխանակ միշտ թեք-թեք էին գնում։

Հէնց որ մի կիրակի կամ մի տօն օր էր գալիս, մանուկների բախտը բանում էր։ Նրանք գիտէին որ «հուքմի» օրը Զալն գործի չէ գը-

նում, ուրեմն և էշը տանն է մնալու և աղ թէ ուշ գոմից կամ մարագից արօտին են արձակելու։ Չարաճճիները խումբ-խումբ շտապում էին դէպի Զալի տունը և հեռու մոտիկ այնքան «մլուլ» էին անում, մինչև որ էշը դռներին կերևար։ Նրանց մէջ չորս թէ հինգ հոգի շատ

Զալի էշը ջրաղաց է գնում։

չարերն էին. հաստապուշ Ապրօն, մեծատի Վասիլը, բղէղ Նեսօն և ծակփափախ Մուկուչը, իրենց հանգ ու հնարքով միւսների խմբապետներն էին։ Ով շուտով էշին իրան ճանկն էր դրցում, նորա կոճին «ալչու» էր. առաջինն ինքն էր հեծնում, գիւղից հեռացնելուց յետոյ՝ «ջիրիթախաղ» սարքում և ապա հերթով միւսներն էին «պոչահանաք» և «բարան կտրէք» խաղում։

Մի անգամ՝ «ջուխտ հուքմի» էր. երկու օր շարունակ Զալօն տանն էր, շաբաթն ու կիրակին անգործ էր անցկացրել։ Նա մտադիր էր կիրակի երեկոյեան, զանգակներից յետոյ, էշը բարձէր ու ճանապարհուէր դէպի իր մի հատիկ արտը, որը գտնուում էր գիւղի հանդիցը դուրս։ Նա ուզում էր շուտ գնար, որ գիշերը արտի ծայրին քնի, երկուշաբթի առաւօտ կանուխ գործի կպչի։

Էշը դռներին չէր։ Զալօն գեղամէջ իջաւ, դէս ու դէն նայեց, սրա ու նրա դռմ ու մաքադը մտաւ, այս ու այն կալապանն ու շվաքարանը տնդղեց, բայց էշը չը կար ու չը կար։ Իսկոյն հասկացաւ, որ չարամիտ երեխաները նորից էշին տարել էին տանջելու. զայրացած՝ վերցրեց մի հոնի «եղան», գիւղիցը դուրս գընալով դէպի մօտակայ արտերը՝ սկսեց անդադար աղաղակել. «Էհէյ, էշ տանող, էհէյ, էշ տանող»։

Սակայն և ոչ ոք չէր պատասխանում։

Զալօն աւելի կատաղեց և բերանը փրփրոով լիքը այս անգամ սկսեց թունդ-թունդ հայհոյանքներ թափել «անամօթների» գլխին։ Երբ տեսաւ որ դարձեալ պատասխանող չը կայ, այնուհետև սկսեց ինքն իր էշին անիծել. «Երանի քեզպէս ապրանք ուրիշ էլ ունի, թէ կենդու ես եմ. դէլն ուտի քեզ ինչ հայվան (առասուն) ես հա։

Այսպէս շարունակ ինքն իրան խօսալով՝ ա-

ռաջ էր գնում և այս ու այն կողմը նայելով մտածում էր. —«Չը լինի թէ՝ գրողի տարած տըղանները էշիս քարհերէց վայը գցած լինեն, կամ մի ծածուկ տեղ թողած ու էս գշեր գէլերի բաժին դառնայ»։

Մինչ այս մինչ այն, Զալօն քանի յիշում



Զալօի հօր յոգնած ճնած եւ նրա մի տարեկան ճուտակը։

էր իր էշի կուլ-կուլ գոռցը», այնքան հոգին նեղում էր և աչքերը մթնում։

Մի առ ժամանակ այս ու այն կողմը ընկնելուց յետոյ, յանկարծ նկատեց որ գիմացի սարիցը իրանց նասիր ապին ցած է իջնում։ Իսկոյն բարձրացաւ մի թմբի գլուխ, ձախ ձեռքը

ականջին դրեց, աջ ձեռքով փափախը վերցրեց ու օդի մէջ ցած ու բարձր անելով սկսեց կանչել.

—Էհէյ, Նասիբ ապի, ապի, ապի՛ի.

Նասիբ ապին Զալօի հօրեղբայրն էր։ Թէպէտ ծեր էր ու մազերն ալևոր, բայց դեռ սուր լսողութիւն ունէր։ Լսելով Զօլի խօսքերը, ընդհատեց քայլերը և պատասխանեց.

—Հէյ, ա՛ղա, էդ ի՞նչ, էդ ի՞նչ ա՛ ա՛ ա՛ ...

Զալօն այնքան պինդ էր աղաղակում և այնքան յուզած էր, որ Նասիբ ապնի ձայնը անլսելի մնաց նրան և շարունակեց.

—Ա՜ խլանաս դու, ապի՛, Նասիբ ապի՛.

—Աղա, էդ ի՞նչ, ի՞նչ, իմանում չ՞ես։— Զալօն շարունակեց.

—Մեր էշը տեհար ո՞չ, մեր էշը տեհար ո՞չ, էշը, էշը.

—Տեհա, համա բերի ո՞չ, տեհա համա բերի ո՞չ.

—Դվօրը (որտեղ) տեհար, դվո՜ը։

—Քարաբակուտի վերի լանջի՞ն, վերի լանջի՞ն։

—Հիմի որ գնամ, ընդեղ կըլի թէ ո՞չ, ընդեղ կըլի՞ թէ ո՞չ.

—Բաս հօ դէլը կերաւ ո՞չ, բաս հօ դէլը կերաւ ո՞չ։

Մինչ այս ու մինչ այն, արդէն երեխաները իրանց անելիքը առաջուց արել և վերջացրել էին։ Երբ տեսել էին Նասիբ ապնին, էշին թո-

ղել էին և «բարակիտուկների» տակը տապ արել։ Այժմ էլ, երբ ականջներովն ընկաւ Զալօի և ապնի «ձէնն ու ձունը», ամեն մէկը շտապել էր փախչել։ Հաստապուշ Ապրօն, որպէս զի Զալօին վախեցնի և հնարաւորութիւն տայ ընկերներին անվտանգ գիւղը մտնելու, բարձրացել էր մի սաղարթախիտ կաղնի ծառ և այնտեղից կանչում էր.

—Էհէ՛յ, իշատէ՛ր, էշն արտը կերա՞ւ, էշն արտը կերա՞ւ, կերաւ.

Զալօն երբ լսեց այս աղաղակը սփրթնեց. նա լաւ գիտէր, եթէ արտերի պահապանը էշին բռնի և «տուն անի», ահագին տուգանք են խլելու իրանից։ Իսկոյն ձայնը կտրեց և սուս ու փուս, ծածկաբար ճանապարհով այնպէս քայլեց դէպի ապնի ցոյց տուած տեղը, որ չը լինի թէ մէկը տեսնի և «խաբար» տայ զօրօղչուն (պահապան), թէ Զալօն էշին էր ման գալիս և նրա էշն է, որ արտն էր ընկել և կերել։

Այս խորամանկ հնարքով, երեխաները գնացին գիւղը և Զալօն էլ տեղ հասաւ ու էշին գըտաւ։ Խեղճ անասունը կանգնած էր գլուխը խոնարհեցրած, ականջները ցած ընկած, պոչը ոտքերի «արանքը» սեղմած, իսկ մէջքի մազը շատ նստել ու վեր կենալուց «փետած» ու ցած էր թափած։ Նա թէև ահ քաշեց ու բթի ծակերից բարկութեան ծուխ ելաւ, սակայն պահապանի

երկիւղից, առանց մի խօսք ասելու, առաջն առաւ, տուն քշեց։

Զալօն կատարեց ամեն ինչ, էշին տեղաւորեց, և՝ որովհետև շատ ման գալուց և բարկանալուց յոգնել էր, այդ երեկոյ էլ չէր կարող հնձի գնալ. մտաւ տուն, Եղսում հարսի պատրաստած սովորական ընթրիքը մաքրազարդեց և պառկեց քնելու, որ առաւօտեան վաղ ճանապարհի։

Մեր չարաճճիների արարմունքը այդ հետևանքն ունեցան Զալօի և նրա էշի գլխին։

II

Լուսացաւ։

Կենդանացաւ գիւղը, ոտքի ելաւ և Զալօն։ Եղսում հարսը վաղուց էր վերկացել և պաշարի խուրջինը պատրաստել։ Հացը, սրխ տորն ու բացախով լիք կճուճը խուրջինի մի մատն էր ածել, իսկ սրոցը, «մատնոցն», «սահէնն» ու «փարչը» միւս։ Էշին էլ մի լաւ թիմարելուց յետոյ՝ փալանն ու չուլը կապել էր ու պատրաստել։

Հէնց որ Զալօն ոտքի կանգնեց, հագաւ իւր հնձի «արաքեօհնակը», (սպիտակ շապիկ) երեսին մի երկու «չուփ» ջուր խփեց, գլխի փափախով երեսը աջ ու ձախ քսեց, սրբեց, մանգաղն էլ թևին ձգեց ու բեռնած էշին առաջն անելով՝ դուրս գնաց տնից։

—Տէր Աստած, իմ երեսը Քոոտի տակը, դու

ըլես աղբատիօղնականը, շարունակ կրկնում էրնա։

—Ա՛յ մարդ, ձայն տուեց Եղսումը, զգոյշ կաց օձից, գէլից. թէզ կը հնձես ու չուստ ետ կը դաս, աչքս ճանփիդ է մնալու։

Զալօն գնաց։ Գնում էր՝ էշին «թօշ-թօշ» անելով ու մի հաց կռան տակը դրած, և ուտում էր, և մտածում.

—Վերի փէշից կսկսեմ հունձը, մինչև ճաշը կաղնիներին կը հասնեմ ու մի քիչ «պատառ-մատաս» կանեմ (նախաճաշ) յետոյ մինչև ըիդնաթամ մի երեք տասնեակ խուրձն էլ որ կապեմ, հալալ կըլի իմ կերածը։

Գնալիս. աղբիւրից փարչը ջրով լցրեց, ինքն ու իր էշն էլ մի կուշտ ջուր խմեցին և շարունակեցին ճանապարհը։ Արևը «միչան» բարձրացել էր, որ նրանք տեղ հասան։ Զալօն շատ ուրախացաւ, երբ հասուն արտը տեսաւ, նրա մտքով անցած հազար ու մի տեսակ չար ու վնասակար ենթադրութիւնները կորան, քէֆն եկաւ, որ հասկերը դեռ ոտքի վրա էին ու չէին «կծղել», փչացել։ Թէև ճանապարհին նա շատ կծղած արտեր էր տեսել և կարծում էր թէ իրանն էլ նոյն օրին կըլինի, բայց փառք Աստծու, նա չէր դժբախտացել. արտը «սաղ-սալամաթ» հնձի էր սպասում։ Նրան թւաց թէ՝ հասկերը իրար քսուելով, մի խոնարհ ողջոյն տուին իրան. փափախը վերցրեց, ծունկ չոքեց, հասկերից մի փունջ բռնեց և համբուրեց. յետոյ

աչքերն դէպի երկինք բարձրացնելով ասաց.

—Տէր Աստած, քաղցրնա բու դատաստանը, մինչև օրս պահել-պահպանել ես ինձ, օրէս դէնն էլ սաղութիւն տուր, անվնաս հնձեմ, խրձեմ, դիզեմ, կրեմ, կասեմ ու «դեղնաղարդիս» տիրանամ, յետոյ ես դիտեմ իմ մարդկութինը։

Յետոյ վերկացաւ, էշիցը խուրջինն ու փալանը իջեցրեց, արձակեց արօտի, թաշկինակով գլուխը կապեց, հնձի մատնոցը ձախ ձեռքի մատներին հագաւ, աջով վերցրեց կեռ մանգաղը և երեսին խաչ հանելով՝ սկսեց հնձել։ Որքան հնձում էր և ոսկեփայլ հասկերը բուռն էր անում, դաստայ հաւաքում, գետնին դարսում, այնքան աւելի քաջալերւում էր։ Հնձեցու հընձեց, արևի թէժ բոցն ու կրակը չէր ազդում ոգևորւած մշակին։ Քրտինքը ճակատից և ականջների բամակից կաթկթում էր, թիկունքն ու կուրծքը խօ և քրտնում, թաց էր լինում, և տաք արևի տակ չորանում. այս դրութեան մէջ նա՝ դարձեալ հնձում էր։ Երբ «սովեց», մանգաղն առաւ ու գնաց կաղնիների ստւերների տակ նստեց, աջ ցուցամատով ճակատի քրտինքը ծոր-ծոր ցած թափեց, ապա՝ «սահէնը» հանեց, սխտորը մէջը ծեծեց, քացախով լցրեց, հացը բրթեց մէջը և մի կուշտ կերաւ։ Թրթուաշ «բրթոշը» այնքան ախորժելի և զովացուցիչ էր Զալօի փորին, որ երկրորդ անգամ՝ պատրաստեց և կերաւ։ Յետոյ «փարչը» շրթունքներին դնելով՝ մի կուշտ էլ ջուր խմեց բթացած մանգաղը սրեց և դարձեալ ոտքի կանգնեց և ըսկսեց իր գործը։ Այս անգամ այսպէս էր մտածում.

—Մինչև մութը կըհնձեմ, դաստէք կանեմ, իրիկնապահին՝ «կէմ-ներ» (կապիչ) կը պատրաստեմ ու խուրձը կը կապեմ։

Այդպէս էլ արեց. երեկոյեան, երբ նա համարեց՝ չորս տասնեակ խուրձն էր հնձել ու կապել։

Էշի քէֆն էլ լաւ էր. թէև արևի տակ, ճանճի յարձակումից հանգստութիւն չունէր, բայց անուշև թարմ խոտից այնքան կերել էր, որ փորը ուռել էր։

Երբ մութը մթնեց, Զալօն նորից հաց կերաւ։ Նրա գործը այս անգամ էշն էր. ոնց անէր, որ էշին անվտանգ պահէր։ Նա լաւ գիտէր, որ այդ հանդումը շատ գայլեր կան, հէնց որ հոտն առնեն՝ կը գան և կարող է պատահել որ էշն էլ ուտեն, իրան էլ։ Մտածեց, մտածեց և ճարը գտաւ, փալանը ծածկեց էշին, որ գիշերային ցրտից չըմրսի, չանի մի ծայրը կապեց նրա ոտից, միւս ծայրը իր ոտից, որպէս զի էշը չը կարողանայ հեռանալ ու մի պատուհասի չը հանդիպի։ Յետոյ մի կակուղ քար գլխի տակ դրեց, շուլը վրան գցեց ու քնեց։ Յոգնած մարդ և քաղցր քուն. այնպէս խորը քնեց, որ զուռնայ փչէիր ականջին՝ չէր իմանայ։

«Քնածն ու մեռածը մէկ է»։ Գիշերւայ մի



Մի սոված գայլ «պուպուզ» եկաւ ու նստեց էշի առաջ։

ժամանակ, որտեղից որ էր, մի սոված գայլ «պուպուզ», եկաւ ու նստեց էշի առաջ։ Էշը՝ նկատելով իր անհաշտ բարեկամին, սկսեց զռռալ։ Մէկ, երկուզռռաց,—ոչինչ չեղաւ։ Գայլն ուզեց իր սովորութեան համեմատ էշին փախսը տալ. դէս թռաւ, դէնն ընկաւ, առաջը ծուլ-ծուլ եղաւ և մի քիչ տեղ վազեց, որ էշը հետևի իրան, բայց երբ տեսաւ, որ նա տեղիցն անգամ չը շարժուեց, բարձրացաւ ու թռաւ, էշի կոկորդից այնպէս պինդ բռնեց ու սեղմեց, որ երկու բոպէից յետոյ՝ ահագին անասունը անշնչացած գետին ընկաւ։

Էշի մէս ու սոված գայլ, ուտում ու թափահարում էր։ Քանի նա գէշը քաշքշում էր այս այն կողմը, այնքան չւանը ձիգ-ձիգ էր լինում։ Զալօն իմացաւ, սակայն իրան չը կարողացաւ պարզել. նա կարծում էր թէ էշը ուզում էր տեղը փոխել ու հեռանալ և երբ ձգձգող չը-ւանը մի ծայրիցն էլ նրա ոտն էր քաշում, նաանդադար կրկնում էր.

—Թօշ, թօշ, գէլն ուտի քեզ...

Եւ գայլն արդէն ուտում էր։ Կերաւ ամբողջ «մարմինը», փորն ու փորոտիքը, մինչև անգամ չորս ոտն ու գլուխն էլ կաշուեզերծ արեց։ Էշի ոտքերը կրծելիս, չւանը նորից շարժուեց և Զալօի ոտքը նորից թափահարեց. այս անգամ դարձեալ խռմփալէ սրմնջաց նա.

—Թօշ, թօշ, գէլն ուտի քեզ՝ ինչ անասուն, ես հա։

Առանց Զալօի կամքի, արդէն գայլը էշին մաքրազարդել էր. և նրա կմախքն էր մնացել միայն։ Երբ ամեն բան վերջացրեց գայլը՝ դունչ ու մունչը լիզելով, դլուխն առաւ ու կորա՛։

Առաւօտեան ցուրտ քամին մրսեցրեց ընած Զալօին։ Նա յանկարծ վեր թռաւ, ծոյլ-ծոյլ օրանջեց, աչքերը տրորեց և այս ու այն կողմն նայեց—էշը չէր երևում. թէև չանի մի ծայրը, իր ոտիցն էր կապած, բայց միւս ծայրը չրկար։ Նա կարծեց թէ էշը կտրած կը լինի և հեռացած։ Ոտքի կանգնեց և ինչ տեսաւ—սիրուն էշի ոսկորներնեն շարուած մնացել չանի ծայրից։ Ա՜խ քաշեց Զալօն, ծնկներին ու գլխին վեր հատեց, բայց իզուր... Յետոյ, կարծես ինքնաբերաբար նա արտասանեց·

—Ա՜յ շան տղու ապրանք, ասենք վէր էր կոխել քեզ Աստծու անիծած գէլը ու չարչարում էր, բաս չկարողացար մի զռալ էլ ա՛, որ իմացել էի ու մի ճար արել...

Հինգերորդ օրը, երբ Զալօն հնձիցը վերադարձաւ, Եղսում հարսը տեսաւ որ էշի փալանն ու խուրջինը իր մարդի մէջքին է բարձուած։ Իսկոյն հասկացաւ նա իրանց թշուառութիւնը։ Այնուհետև Զալօն էշի գործն էլ ինքը վիզն առաւ, և այդպէս էլ մնաւ նա, 'ու նոր էշի էլ չարժանացաւ։

Եւ քանի այդպիսի թշուառներ կան մեր գիւղերում...

ՀՍՍՀ-ՍՍՀ
Ա. Մ. Գորկու անվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0399123

6398

Պատրաստ են տպագրության համար հետևեալ աշխատությունները

1. ԳԱՂԱՓԱՐԻ ՀԵՐՈՍԸ
2. ԳԻՒՂԱԿԱՆ ՑԵՑԵՐ, I մաս. (Ղազախի կեանքից)։
3. ՇԱՏԵՐԻՑ ՄԷԿԸ, (Թիֆլիզի կեանքից)։
4. ԱՐՑՈՒՆՔՆԵՐ, (Բանաստեղծութիւն)։

ԳԻՆՆ Է 3 ԿՈՊ.